


մեռած էր Եթովպական պատերազմին մէջ, — օրհնեց զայն, օրհնեց անոր ընտանիքը ու խաղաղ կերպով գլուխը թողուց բարձին:

«Մեռաւ... մեռաւ, — կը գրէ հրապարակագիր մը, — յարմար վայրկենին երբ կեանքը կրնար թուիլ իրեն համար անօգուտ ծանրութիւն մը: Յոգնած ու տառապալի, երկար տարիներէ ի վեր կքած ինքն իր վրայ կարկտելու հեռաւոր յիշատակներ, աչքին առջեւ ունենալով պատկերը հայրենիքի մը վերաւոր ու օրհասական տաղանդներու մէջ: Նա պէտք էր հեռանալ ու հեռացաւ ասպարէզէն ճիշտ ատենին»:

Հ. Յ. Շ.



ՎԵՆԵՏԻԿ ՔԱՂԱՔԻՆ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ

— 000 —

Իտալիոյ մուտքովը պատերազմի մէջ՝ կը ստեղծուէր Իտալիոյ պէս գեղարուեստական երկրի մը համար ամենամեծ վըտանդը կորուստի իր ծոցին մէջ ամփոփուած արուեստի գլուխ գործոցներուն: Բայց անխուսափելի էր դէպքերուն յաջորդականութեամբը խմորուած քաղաքական այն կացութիւնը, որով Իտալիա եւս, 1940, Յունիս 10-ին կը ստիպուէր նետուիլ կրակին մէջ՝ յոյսով մեծահարուստ դուրս ելլելու անկէ, զրեթէ անվնաս կամ քիչ վնասով:

Բայց իրականին մէջ բոլորովին հակառակը եղաւ:

Երբ Եգիպտոսի դռներուն առջեւ խոշոր պարտութիւն մը կրելով՝ իտալ-գերմանական բանակները ենթարկուեցան ամօթալի նահանջի մը, Իտալիոյ համար վտանգը սկսաւ աւելի սպառնալից դառնալ, վասն զի պատերազմը իր առած ահագնաթափ ընթացքով պիտի փոխադրուէր Իտալիոյ բուն հողին վրայ: Այդ պարագային այլեւս բոլորովին անկարելի պիտի ըլլար առաջը առնել սպառնացող վտանգին՝ ի վնաս

անոր գեղարուեստական քաղաքներուն: Եւ ո՞րը անոնցմէ չունի արուեստի գլուխ գործոց մը իր մէջ. ամէնէն աննշան կարծուած աւանն ալ կը բովանդակէ միշտ արուեստի գործ մը, նկարասրահ մը, յուշարձան մը, թանգարան մը հռոմէական կամ յունական հնութիւններու, եւս. այսպէս են Սիենա, Ռիմինի, Հոավեննա, Ֆլորենցէ, Ռովիլլոյ, Ֆերրարա, Ճենովա, Հըռոմ, Միլան, Թորին, եւս: Եւ ասոնց մէջ ամէնէն աւելի վենետիկ, որ եզական կերպով գեղարուեստի քաղաք է, կառուցուած ջուրի վրայ, ինքնապաշտպանութեան ամէն միջոցներէ զուրկ, կղզիացած, եւ լոկ կամուրջով մը միացած ցամաքին:

Քաղաքին Վսեմ. Ծիրանաւորը Աստուածատուր Փիացցա, գուրգուրալով չնաչխարհիկ քաղաքին եւ իր հօտին վրայ, որ հետզհետէ կ'աճէր թիւով՝ խուժումովը նոր գաղթականներու Իտալիոյ հարաւային ու հիւսիսային քաղաքներէն, 1942 Նոյեմբեր 20ին կը գիմէ առ Սրբազան Քահանայապետը՝ խնդրելով որ ինքը հաճի պաշտօնական դիմում մը կատարել Դաշնակից Ազգերու Իշխանութեանց՝ հրաւիրելու համար Վենետիկի վրայ անոնց առանձնապատուկ ուշադրութիւնը. որպէս զի ան իր չքեղ պալատներով ու եկեղեցիներով, իր պատմական յիշատակներով ու թանգարաններով, առարկայ աշխարհի հիացմունքին, զո՞հ չերթայ յախուռն ուժակոծութիւններու:

Իր Նախորդը, Ծիր. Պետրոս Լաֆոնթէն եւս ժամանակին նոյնը ըրած էր իտալ-աւստրիական պատերազմի ատեն, խնդրելով Վատիկանի միջոցաւ Աւստրիոյ Կարոլոս կայսրէն՝ խնայել Վենետիկը:

Խնդրանքը կը կատարուի Ս. Քահանայապետին Քարտուղարական Պաշտօնէութեան կողմէն Դաշնակից Ազգերու մօտ, եւ կը ստացուի գոհացուցիչ պատասխանն ալ, որուն համաձայն «Վենետիկ քաղաքը պիտի խնայուէր անգլ-ամերիկեան սաւառնորդներէն»:

Այս լուրը ծածուկ մնացած էր Ժողովուրդէն՝ հասկնալի պատճառներով: Բայց կարծես նախազգացում մը կար Ժողովուր-

դին մէջ՝ որ հետզհետէ կը լեցնէր քաղաքը՝ 7-8 հարիւր հազարի հասցնելով անոր բնակչութեան թիւը, բան մը որ մտահոգութիւն սկսած էր պատճառել վարիչներուն:

Վենետիկ կը վայելէր բարոյական ստուգութեան մը տուած երջանիկ ապահովութիւնը...:

Եւ ստուգիւ 1944ի Մարտին, երբ թշնամի սաւառնակները սկսան սաստիկ ուժակոծել Մեսթրէ, Մարկերա, Քիրինիակոյ, Միրա, ինչպէս նաեւ Թրեւիզոյ ու Փատուա, հաղորդակցութեան դիմերը փճացնելու համար (հասցնելով միանգամայն խոշոր վընասներ բնակչութեան), Վենետիկ չզգաց ոչ մէկ խանդարում իր կեանքի ընթացքին մէջ: Միակ բացառութիւնն որ եղաւ՝ էր 1944, Օգոստոս 14ի առաւօտը, երբ սաւառնակ մը ճիւղտեքայի ջրանցքին մէջ՝ ուժակոծելու համար գերմանական հիւանդանոց նաւը, Ֆրայպուրկ, որ խարխիւ նետած էր Մաքսատան երկայնքին ճիշտ ծայրը, գնդահարեց Ֆուլիան գացող շոգեկաւը, սպաննելով ճամբորդներէն երեսուն հոգի եւ վերաւորելով շատեր:

Յուզումը մեծ եղաւ Վենետիկի մէջ, իրարանցումն ու սուգը փոթորկեց Ժողովուրդին կեանքը: Վսեմ. Ծիրանաւորը հաղորդեց տխուր դէպքը Ս. Քահանայապետին, որ իր արդար բողոքը ներկայացուց Դաշնակիցներուն, որոնք վերստին չհեռացրով մը ապահովութիւն տուին թէ նկատի պիտի առնուի Վենետիկի պարագան:

Բացի անգլ-ամերիկեան սաւառնակներու ուժակոծութիւններէն՝ Վենետիկի համար վտանգ մ'էին նաեւ այն կազմակերպեալ կործանումները ճարտարարուեստի կեդրոններուն, ելեքտր. կայաններուն զոր գերման կործանարար բանակը աւերելով կը քաշուէր Իտալիոյ հարաւային քաղաքներէն...: Յնցիչ լուրեր էին անոնք, որ Լրագիրներու մէջ հրատարակուեցան Սեպտեմբ. 21ին Հոավեննայի, ու 25ին ալ Պրատենէի մէջ տեղի ունեցած աւերումներու մասին: Սարսափը բռնեց նաեւ Վենետիկը,

«ԲԱԶՄԱՎԵՐ»

վտանգի այդ քաղաքներուն պատահած աղէտը կը սպառնար հաւասարապէս բոլոր քաղաքներուն:

Վսեմ. Ծիրանաւորը խափանելու համար այսպիսի ահաւոր վտանգ մը՝ որ Վենետիկի համար աղետալոյն պիտի ըլլար քան ուրիշ ո'ւէէ քաղաքի, 1944, Սեպտեմբեր 27ին գիմեց նամակով մը առ Քեսսելիինկ մարաշխտը, Գերագոյն Հրամանատարը բոլոր գերմանական Ձօրքերուն Իտալիոյ մէջ, բացատրելով թէ Վենետիկ քաղաքին պարագան բոլորովին ուրիշ է, եւ թէ ո'ւէէ խանդարում՝ կրնայ անել խառնաշփոթութեան մատնել բնակչութիւնը, որ արդէն անսովոր կերպով աճած է: Նկատի առնել կու տար եւս անոր կղզիացած վիճակը, զուրկ ցամաքի դիւրութիւններէն, ուր ելեքտրական կայաններու փճացումով կեանքը դատապարտուած է կասելու իսկոյն. աղետալի՜ մանաւանդ վիճակը հիւանդանոցներու, մանկաբուժարաններու, դպրոցներու, բարեգործական բոլոր հաստատութիւններու՝ եթէ երբեք այսպէս հարուած մը կրէ առօրեայ կեանքը: Դարձեալ նըկատի առնել կու տար կաղի եւ ջուրի պակասն առաջ դալիք զարհուրելի տաղանապը սովի, ծարաւի ու խաւարի՝ որ մօտալուտ ձմեռուան մը մէջ՝ Վենետիկի պէս եզականօրէն ծովային քաղաքի մը համար անբացատրելի աղէտ մը կրնայ ստեղծել:

Ապահով ըլլալու համար կատարուած խնդրանքին յաջող ելքին՝ Ծիրանաւորը անպաշտօն ձեւով տեսակցութիւն մը ունեցաւ Ս. Մարկոսի աւանդատան մէջ՝ Գերման դեսպանին՝ Տոքթ. Ռահնի հետ, գերման լիազօր նախարար Իտալիոյ մէջ, որուն առջեւ նոյնպէս պարզեց Վենետիկի բացառիկ պարագան. եւ նախարարը աղնիւ եւ բարեացակամ տրամադրութեամբ խոստացաւ կարելին ընել տալ: Նոյն տարուայ Հոկտեմբեր 27ին կը հասնի պատասխանը խնդրանքին Գերագոյն Հրամանատարի կողմէն, ապահովցնելով Ծիրանաւորը որ պիտի խնայուի ելեքտրական կայաններուն եւ ճարտարարուեստի ուրիշ կեդրոններուն՝ հարկաւոր քաղաքին կեանքին համար:

Կը մօտենան ճգնաժամային օրերը: 1945ի գարնան խտալական ճակատի մերձեցումով դէպի հիւսիս, Վենետիկ եւս կը գտնէ ինքզինքը աւելի սպառնական դարձած վրտանդներու առջեւ:

Մարտի սկիզբները ձիւտեքքա ջրանցքին բերանը՝ գերմանական Կարմիր խաչի նաւ մը, Կրատիսքա, խարխիս կը նետէ: Մտածութիւնը եւ տալանապը կը պաշարէ վենետիկցիները, մանաւանդ Վսեմ. Ծիրանաւորը, մտահոգուած իր հօտին ապահովութեամբ:

Ժամանակ մը քաղաքին հեղինակաւոր անձերը՝ խորհրդակցութեամբ կը միաբանին «բաց քաղաք» յայտարարել տալ Վենետիկը ըստ միջազգային օրէնքներու: Ու Ծիր. Պատրիարքը նամակ մը կ'ուղղէ այս մտքով առ Քեսսելըինկ. բայց նամակը անպատասխան կը մնայ, կանչուած ըլլալով զօրավարը ստանձնելու հրամանատարութիւնը Արեւմտեան ձախտին, ուր գերման գունդերը ծանր պարտութիւններ կրելով՝ միշտ աւելի ետ կը մղուէին անդլամերիկեան ջախջախիչ ուժերուն դիմաց:

Երկրորդ խորհրդակցութեան մը առթիւ՝ խնդրը աւելի կը լուսարանուի. ամէնքը որ առաջ կը փափաքէին «բաց քաղաք» հռչակել տալ Վենետիկը, բացէի բաց կը հրաժարին հիմա անկէ: Գերմանական բարձրագոյն իշխանութիւնը ծանուցած էր՝ որ այդ պարագային միայն քաղաքին կեդրոնը ազատ կը մնայ օդային յարձակումներէն. իսկ չրջակայքը, մէջն առած ձիւտեքքայի ջրանցքը, Ս. Գեորգ կղզին, Նաւարանը, Լիտոն եւ քովի կղզիները, կ'ենթարկուին հաւասարապէս վտանգի: Ասով Վենետիկ չէր փրկուեր. խորհրդակցութեան անդամները լաւագոյն համարեցան մնալ նախկին պայմանին մէջ, վստահելով Գաշնակիցներու մարդասիրական զգացումներուն վրայ եւ այն յոյսին՝ որ երբեք Վենետիկի պէս գեղարուեստի քաղաք մը պիտի չուզեն կործանել:

Սակայն թշնամին կը հետապնդէր միշտ, միտք չունենալով հանդերձ դպչիլ Վենետիկի, զինուորական նկարագիր ունեցող կայանները, ռազմամթերքի տեղերն ու

փոխադրութեան միջոցները, զոր գերմանացիները՝ օգտուելով Վենետիկի քիչ թէ շատ ապահով վիճակէն, կը ջանային դիզել հոն:

Այս պատճառով է որ տեղի ունեցան 19 եւ 21 Մարտի օդային յարձակումները: Առաջինը կը պատահէր գիշեր ատեն Քաւարէնիոյ թաղին մէջ, վնաս հասցնելով հիւանդանոցի մը եւ երկու ժողովրդական տնակներու: Երկրորդը աւելի սարսափելի էր. կէսօրէ վերջ, ժամը 15,45ին, ահաւոր պայթում մը կը ցնցէ յանկարծ բովանդակ Վենետիկը: Սարսափը եւ իրարանցումը իրարու վրայ զիջուած բնակչութեան անբացատրելի էր: Պալատներու, պանդոկներու, մեծ հաստատութիւններու եւ եկեղեցիներու մէջ վնասը ահագին էր. դռներ, պատուհաններ, եւ մանաւանդ ապակեղէնները խորտակուած, փշրուած էին, եւ վրահատութիւնն ու լքումը բռնած էր ժողովուրդը՝ աւելի չարագոյն աղէտներու վախով: Թշնամին նպատակն եղած էր զարնել ռազմամթերքով լի նաւ մը, որ կը գտնուէր ծովափ՝ քաղաքին ծայրը (Մարիթիմա): Նաւը բարեբախտաբար կ'ընկղմի եւ վնասը կը չափաւորուի:

Սակայն Կարմիր խաչի Կրատիսքա նաւը, որ խարխիս նետած էր Մաքսատան երկայնքին վրայ, կեցած իր տեղը անշարժ՝ հրաւէր մըն էր ուրիշ յարձակումի: Ծիրանաւոր Պատրիարքը յետ քանի մը անգամ զրով ու բերանացի խնդրանք ներկայացնելու որ հեռացնեն դայն, ահաբեկած այլեւս 21 Մարտի ռաբակոծութենէն, յաջորդ օրն իսկ իր Քարտուղարը կը զրկէ Գերմանիոյ Ընդհ. Հիւպատոսին մօտ՝ փութացնելու համար նաւուն, ինչպէս նաեւ Լիտոյի, Ծաթթերէի եղերքներէն ու Նաւարանէն բոլոր զինուորական զէնքերու հեռացումը: Հիւպատոսը կ'առաջնորդէ Քարտուղարը Ծովային տեղական Հրամանատարին, որ գերմանական կոպտութեամբ կը մերժէ կատարումը խնդրուածներուն: Կը տաքնայ խօսակցութիւնը Քարտուղարին եւ Հրամանատարին միջեւ. մանաւանդ Կրատիսքա նաւուն փոխադրութեան չուրջ՝ Հրամանատարը կը յայտարարէ որ ինքը չի կրնար

առանց Ծովակալին բացայայտ կարգադրութեան քայլ մ'առնել: Հիւպատոսը կը միջամտէ եւ կը յանդին այն եղրակացութեան՝ որ Քարտուղարը, ի դիմաց Ծիր. Պատրիարքին, դիմում մը կատարէ ռազմակի Ծովակալին:

Վսեմ. Ծիրանաւորը իմանալով խորհրդակցութեան արդիւնքը՝ պատշաճ կը հաշտուի նամակով մը դիմել առ Ծովակալը, բացատրելով հոն դրաւոր կերպով բոլոր պարագաները կացութեան, որ օրէ օր աւելի ողբերգական կը դառնար: Կը վերջացնէ յիշեցնելով զինուորական հրամանատարութեան ծանր պատասխանատուութիւնը պատմութեան եւ աշխարհի առջեւ: Նաեւ կը զրկուի գերմանացի թղթատարի ձեռքով Մարտ 25ին. նոյնին օրինակ մըն ալ Գերմ. Գեապանին՝ Ռահնին, եւ ուրիշ ալ Վենետիկ Գաւառի Գլխաւորին: Նամամը Վենետիկ Գաւառի Գլխաւորին տեղէին միացած էր նաեւ մանրամասն տեղեկատուութիւն մը, դրուած Հիւպատոսէն, դիւրացնելու համար Պատրիարքի խնդրանքին ընդունելութիւնը:

Յաջորդ օրը, 26 Մարտ, Հիւպատոսը կը հաղորդէր ստացուած հրահանգը՝ տեղափոխելու անմիջապէս Կրատիսքան 48 ժամուան մէջ. նմանապէս թէ հրաման տրուած է հեռացնելու Վենետիկէն բոլոր զինուորական կայանները եւ ռազմամթերքները, ինչպէս նաեւ թէ հասած են քաղաք գերմանացի կարող մասնագէտներ՝ դրուած ականները հանելու:

Վենետիկ հանդարտած էր, եւ ապահովուած այլեւս օդային յարձակումներէն...: Բայց քսան եւ հինգ օր հաղիւ վայելած էր իր խաղաղութիւնը, երբ իտալիոյ հաւաքային ճակատին մերձեցումով՝ քաղաքը զգաց որ իր դռներուն առջեւ ալ կը հասնի պատերազմի հուրն ու սարսափը:

Ապրիլ 25... Ս. Մարկոսի տօն: Ծիր. Պատրիարքը կը քարոզէ Եկեղեցւոյ մէջ, յորդորելով ժողովուրդին հսկայ զանգուածը՝ պահելու իր հանդարտութիւնը եւ անխռով ապաւինութեամբ սպասելու օգնութիւն Աստուածային Նախախնամութեան: Կը վերջացնէ իր խօսքը՝ ըսելով թէնէն: Կը վերջացնէ իր խօսքը՝ ըսելով որ Ս. Մարկոսի առիւծը եւ Հրաշագործ

Տիրամայրը Յաղթութեան (Նիքոփէիա) պիտի փրկեն Վենետիկը:

Կը դիմէ միանգամայն Գերմ. Հիւպատոսին՝ խնդրելով որ գերմանական զօրքին հեռանալու պահուն խնայուի քաղաքին, որ չըլլայ թէ այնքան օրերու աշխատութիւնները աղատելու դայն ամէն վտանգէ, վերջին պահուն մէկ հարուածով ոչնչանան:

Ապրիլ 26ին Հիւպատոսը կը հաղորդէ որ ըստ կարգադրութեան լիազօր Դեսպանին Գերմանիոյ, Վենետիկ երբեք տալանալի եւ խռովքի պիտի չմատնուի, ոչ մէկ մարդ պիտի բռնուի որպէս պատանդ, ոչ մէկ կործանարար արարք տեղի պիտի չունենայ քաղաքին մէջ եւ թէ պիտի յարգուին յուշարձաններն ու արուեստի գործերը:

Դեսպանին աղնուութեան վերջին ցոյցն էր ասիկա, որ արդէն նախընթացաբար ալ այնքան բարեացակամ դառնուած էր. Կրատիսքա նաւուն հեռացումին մէջ կար յայտնապէս իր մատը:

Ապրիլ 27... անդլամերիկեան բանակները արդէն հասած էին Վենետիկի ափերուն: Հայրենասէրներու կազմակերպւալ խումբը եւ Ազգային Ազատութեան Յանձնախումբի անդամները գործի վրայ են: Արշալոյսէն առաջ Սանթա Մարիա Մաճ. ճիւղի բանտերը կը դրաւուին ու ազատութիւն կը տրուի անարդար կերպով արգելափակուած զոհերուն:

Ապրիլ 28ի առաւօտը քաղաքը եռուղեփայլէր. ժողովրդական յեղափոխութիւն մը կայ մէջտեղ, հայրենասէրներու խումբէն քաջալերուած՝ ժողովուրդը կը մասնակցի գրաւելու քաղաքին կարեւոր կեդրոնները, հեռախօսի կայանները, պաշտօնատեղիները: Ֆաշական զինուորները եւ գերման զօրքը տեղ տեղ կը դիմադրեն, կը լսուին օդին մէջ պայթումներ հրացանի, գնդաձիւրի...:

Գերմ. Հիւպատոսը ժամը 10ին փափաք կը յայտնէ խօսելու Ծիր. Պատրիարքին հետ: Աւելորդ արիւնհեղութիւններ խնայելու համար կը համաձայնին որ Հիւպատոսը եւ Վենետիկ Գերմ. Զին. Հրամանատարը ճերմակ դրօշակով Թագաւորական Պալատէն գան Ս. Մարկոսի Զանգա-

կատան ոտքը, ուր պիտի գտնեն պաշտօնական անձեր՝ ընդունելու զիրենք նմանապէս ճերմակ դրօշակով եւ առաջնորդելու Պատրիարքարան:

Ժամը 11ին կ'ընդունի զիրենք Ծիրանաւորը: Հիւպատոսը, ներկայացնելէ վերջ վերահաս պարագաներու պատճառով Վենետիկի ներկայ վիճակը, կը հաղորդէ Զին. Հրամանատարին տրամադրութիւնը ձգելու Վենետիկը, միայն թէ ինքը եւ իր զինուորները ու գերման ուրիշ իշխանութիւնները կարենան զէն ի ձեռին դուրս ելլել քաղաքէն, առանց ո՛ր եւ է վտանգի եւ նեղութեան:

Ծիրանաւորը կը յայտարարէ որ արդէն Ազգ. Ազատութեան Յանձնախումբը հրահանգ տուած է վնաս չհասցնելու գերման զինուորներուն. բայց ընդհակառակն ասոնք են, կ'աւելցնէ, որ կը գրգռեն ողիները ընդունան հրացանաձգութիւններով ի ծանր վնաս երկու կողմերուն: Ու կը յանձնարարէ որ իրենց մեկնումի պահուն յարգեն անձերն ու իրերը, եւ թէ Վենետիկ անունով կը հասկցուի Լիտոն, կղզիները եւ բոլոր չըմակայքը:

Զինուորական Հրամանատարը իր տեւտոնեան խորխորութիւնը ցոյց տալու եւ վերջին անգամ մ'ալ երկիւղ ներշնչելու համար՝ կը յայտարարէ որ Գերմ. Զօրքը Վենետիկի մէջ դեռ իր ամբողջ ուժի մէջն է եւ կարող է բնաջինջ ընել զայն, եթէ չթոյլատրուի իրեն ազատօրէն ու անվնաս եւ իր պահանջած պայմաններուն համաձայն ու ժամուն դուրս ելլել քաղաքէն:

Ազգ. Ազատութեան Յանձնախումբը, թելադրութեամբ Ծիր. Պատրիարքին՝ ազնութեամբ վարուելու Գերմ. Զին. իշխանութեան հետ, կու գայ հետեւեալ համաձայնութեան, որ Ապրիլ 29ի առաւօտը ժամը 6ին գերմանական բանակը դուրս ելլէ քաղաքէն:

Վենետիկ փրկուած էր վերջապէս եւ ազատ:

Ս. ՂԱԶԱՐ ԵՒ Մ. - Ռ. ՎԱՐԺԱՐԱՆԸ
ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔԻՆ

Պատերազմը, գիշատիչ անգղի պէս իր աւերիչ թեւահարումովը անցաւ բովանդակ իտալիոյ վրայէն...: Քաղաքներ, աւաններ՝ ուր արուեստի գործեր եւ յուշարձաններ՝ փառքը կը կազմէին այս գեղարուեստական երկրին, այսօր հողի հաւասարած են: Մոնթէքասսինոյի պէս փառահեղ ու հինաւորաց մենաստան մը փլատակներու կոյտ է, եւ դեռ ո՛րքան նման գեղեցկութիւններու կորուստներ արձանագրուած են աղետալի պատերազմին բացած սեւ էջերուն մէջ:

Վենետիկի տխուր եւ ճգնաժամային ապրումներուն հետ մենք ալ մեր փոքրիկ հողին վրայ, որ Ս. Ղազար կը կոչուի եւ է հայկական ողւոյն, մշակոյթի կեդրոն Վենետիկեան Լճակին մէջ, ապրեցանք սարսափի օրեր: Մեր առաջին եւ մեծագոյն մտահոգութիւնն եղաւ փրկել ինչ որ կար Ս. Ղազարի մէջ աղգային հնութեան տեսակետով արժէքաւոր՝ ձեռագիր կամ տըպագիր, Միաբանութեան 250 տարուան կեանքին գիւնական փաստաթուղթերը, կարեւոր աշխատութիւնները իր միաբաններուն, որոնք մտքի սպառում եւ քրտինք արժած են, տանելով այս ամէնը գիւղական ապահով վայր մը:

Պատերազմական վիճակը երկրի մը համար տնտեսապէս մեծ եւ երբեմն անդարմանելի աղէտ է անտարակոյս: Այս պարագան կ'իրականանայ իտալիոյ պէս աղքատ ու կարօտեալ երկրի մը համար, ուր նախանիւթերու պակասը մեծապէս զգալի է: Նիւթի պակասը հետը կը բերէ անսովոր սղութիւն. դրամի անկումով կը ստեղծուին միաժամանակ անել դժուարութիւններ քաղաքացիական կեանքին մէջ: Պատերազմական վիճակը կասեցնելով ամբողջ վեց տարի նաեւ չէնքերու պահպանումին հողն ու պէտքը, ահաւոր վնաս հասցուցած է միանգամայն այս տեսակետով:

1945 Մարտ 21ին տեղի ունեցած ոմբակոծութիւնը զգալի եղաւ իր տխուր հետեւանքով նաեւ Վանքին եւ մանաւանդ Մ.

- Ռ. Վարժարանին վրայ, որ գտնուելով բուն քաղաքին մէջ, աւելի եւս ենթարկուեցաւ վնասի: Թիէփոլեան շքեղ դահլիճը, ուր կը կատարուէին գեղեցիկ հանդէսներ եւ վայրն էր գիտական բանախօսութիւններու, ահաւոր ցնցումէն կէս միլիոնէ աւելի վնաս կրած է:

Մեծն Միխիթարի վառած գաղափարականին Ջահը անշէջ կը ճաճանչէ սակայն Ս. Ղազարի վերեւ, ուր կայ փոքրիկ հող մը Հայաստանի պէս գուրդուրալի եւ ներշնչող, եւ ուր Միխիթարեան Հայրերը կ'ապ-

րին աղօթքի, խոկումի, ուսման եւ գրական բեղուն արտադրութիւններու կեանք մը: Հայ Ազգին աչքն ու ակնկալութիւնները ուղղուած են անոր, որ անտարակոյս այս աղետալի պատերազմին յաջորդող երջանիկ ու խաղաղ տարիներուն, պիտի իջնէ վերստին ասպարէզ իր առաքելական, դաստիարակչական ու գրական տաք գործունէութեան:

Բայց Ազգն ալ հարկ է որ նպաստէ ու աջակցի իր ձեռնարկներուն իրականացման:

ԽՄԲ.

ԱՐՄԱԻՐ ՔԱՂԱՔԻՆ ԾԱԳՈՒՄԸ

Երբ 1942ին գերման բանակները յաղթական կը յառաջանային ուսական հողին վրայ եւ մօտ էին մտնելու նաեւ Արմաիր վրայ քաղաքը կողմասի մէջ, իտալական թէմփոյ քաղաքը կողմասի մէջ, հրատարակութիւնը (1942, Օգոստոս 20-27) հրատարակեց հետաքրքրական յօդուած մը, ուր իտալացի յօդուածագիրը կէս մը պատմական ու հնախօսական ոճով նպատակ ունի ապացուցանել ծագումը Արմաիր քաղաքին՝ կապեցնելով անոր գոյութիւնը Հռոմի եւ միացնելով արիական խնդրին հետ:

Հայ ժողովուրդի հանգչ պատայայտած իր ազնիւ շէշտը, գնահատանքը անոր հնութեան եւ արիականութեան, դրդեց մեզ որ հայացնելով այդ էջերը ծանօթացնենք նաեւ մեր ընթերցողներուն: Անշուշտ յօդուածին մէջ կան անդրադարձութիւններ որ պատմէ կան անդրադարձութիւններ, որոնք մական հիմ կ'ենթադրեն, եւ կան ալ՝ որոնք պարզ երեւակայութեան մը արդիւնք կը թուին ըլլալ. ասոնց մասին յետոյ պիտի խօսինք:

Ստորագրուած է Սաքունոյ կեղծանունը, հոսմէական զիցարանութեան ամենահին անտուածին անունով, թերեւ շատ հին դասերու խորէն եկող ձայնի մը պատրանքը տալու համար ընթերցողին:

Խոր գոհունակութեամբ է որ հինաւորաց Սաքունոն տեսաւ եւրոպական դունդերու մուտքը Արմաիր վաղեմի քաղաքին ներս: Բան մը չ'ըսեք արդեօք ընթերցողին այս անունը. եւ սակայն շատ մը ուրիշ ուսական անուններու քով՝ որոնք վերջին չըրջաններուն տրուեցան Կովկասի քաղաքներ:

րուն, Արմաիր կը պարունակէ իր մէջ արտաքոյ կարգի լատինական հնչում մը: Եթէ լաւ ուշ դնենք՝ Արմաիր երեք վանկեր են, որ կը կազմեն Ենէականի նախերգանքին սկզբնաւորութիւնը. «Ar-ma-vir-umque Cano».

Դիպուածի մը արդիւնք է այս նոյնութիւնը: Արդի պատմագէտներու համար անտարակոյս պարզ դէպք մըն է, զուրկ ո՛ր եւ է նշանակութեան: Մինչդեռ (խօսելով զիցարանօրէն) Սաքունոյին համար, որ շատ աւելի հին է քան Հռոմ քաղաքը, եւ որուն ծանօթ են հին դարերը՝ որոնց մէջ ապրած է ան, ոչ մէկ կերպով դէպք մըն է: Թէ ինչո՞ւ այս երեք վանկով կոչուած է հայկական անդրանիկ կառավարութեան մը մայրաքաղաքը, եւ Վիրգիլիոսի Ենէականի, կրօնա-քաղաքական գիւցաղներգութեան մը նախերգանքին առաջին բառերը՝ պատճառն այն է՝ որ այս վանկերը հիներու համար սրբազան էին: Եթէ սրբազան չըլլային՝ այսպէս պիտի չկոչուէր քաղաք մը եւ ոչ ալ աղգային գիւցաղներգութիւն մը պիտի սկսէր այդ վանկերով: Բայց թէ ինչո՞ւ սրբազան էին եւ ինչ նշանակութիւն ունէին, ահա այդ է որ չի կրնար մեզի հաղորդել Սաքունոն՝ վախճալով յայտնել հին գաղտնիքներ՝ զոր մարդկութիւնը այսօր իր ներկայ